ՀԵՐԲԵՐՏ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՍՏՈՐՈՒՄՆԵՐ ԱԶԳԱՅԻՆ ԿՐԹԱԿԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԻ ՇՈՒՐՋ

Ժամանակակից աշխարհն իր զարգացման միտումներով, բարդ ու հակասական փոխհարաբերություններով երկընտրանքի առաջ է կանգնեցրել երկու հարյուրից ավելի երկրների և շուրջ երկու հազար ազգերի ու ժողովուրդների, որոնք ունեն իրենց յուրատիպ աշխարհընմբռնումը, հավատը, մշակույթը և այդ ամենով պայմանավորված՝ ազգային կրթության բնույթը:

Մարդկությունն այսօր փնտրտուքի մեջ է, նպատակ ունենալով բացահայտել ու կիրառել այն գործոնները, որոնք սահմանակցման եզրեր և ներդաշնակման ընդհանուր գոտի կարող են ստեղծել, մի կողմից գլոբալացման (համընդգրկման), մյուս կողմից, էթնոհինքնության պահպանման առումով: Փաստորեն էթնոհինքնության հիմնախնդիրն իր կարևորությամբ արդի փուլում վերահիմաստավորվում է: XX դարի առաջին տասնամյակներին համաշխարհային հասարակական-քաղաքական ու գիտական կարծիքի համաձայն գերակշռում էր այն համոզմունքը, որ մոդեռնիզացիային (արդիականացմանը), ժողովրդավարացմանն ու գլոբալացմանը զուգահեռ նվազելու է էթնիկականի գործառույթը և աստիճանաբար կկորցնի իր նշանակությունը (հիշենք թեկուզ սրանից մոտ 90 տարի առաջ ԱՄՆ-ի նախագահ Վիլսոնի դիրքորոշումը, համաձայն որի Ամերիկայում բնակչությունը չպետք է բաժանվի ըստ ազգային հատկանիշի, իսկ այն մարդը, որն ազգայնականության գաղափարներով է տարված, ԱՄՆ-ի դրոշին արժանի քաղաքացի չի կարող լինել):

Հումանիտար գիտությունների բնագավառում աչքի ընկնող մի շարք մտածողներ նույնպես տուրք տվեցին նման դիրքորոշմանը:

XX դարի 60-ական թթ.-ից սկսած սոցիալ-քաղաքական դիրքորոշումն ու գիտական մոտեցումը տրամագծորեն փոխվեցին: Այսօր մի շարք գիտությունների կատեգորիալ ապարատում իր ուրույն տեղն ունի «էթնիկական» կատեգորիան, որով էլ պայմանավորվում է միջգիտական հեռանկարային կարևորություն ունեցող հետազոտման անհրաժեշտությունը:

Շատերը հակված են այն կարծիքին, որ արդի փուլում, երբ Բոլոնիայի հռչակագրի բովանդակության համապատասխան գործընթաց է սկսվել, կարելի է փաստել, որ համաեվրոպական կրթական տարածքի ձևավորմամբ կարող է էթնիկականը տարալուծվել վերազգային կրթական համակարգի պահանջների

բերումով: Բայց, առավել մոտիկից ծանոթանալիս, ինչպես սորբոնյան, բեռլինյան, լիսաբոնյան, այնպես էլ Բոլոնիայի հռչակագրերի ազգայինի ուղղվածությամբ բովանդակությանը, պարզվում է, որ Եվրոպայի համար արմատական նպատակն է պահպանել մշակութային բազմազանության գաղափարը, լեզվական պոլիֆոնիան, ինչպես նաև ազգային կրթական համակարգերի առանձնահատկությունները:

Ինտեգրացման առումով ապագայում պետությունները նույնիսկ կարող են կորցնել իրենց մենաշնորհային իրավունքները քաղաքականության, տնտեսության և տեղեկատվության ոլորտներում: Նույնը չի կարելի կանխատեսել կրթության էթնիկական ուղղվածության մասին, որի բովանդակային իրականացումը, ինչ խոսք, ինքնահոսային չէ:

Ինչպես կրթության էթնիկական ուղղվածության, այնպես էլ էթնոինքնության պահպանման առումով կան բազմազան հիմնախնդիրներ, որոնք լինելով արդիական, լուծման կարիք ունեն: Այդ հայեցակետից կրթության էթնոքաղաքական բովանդակության բացահայտումն ու դրան համապատասխան ազգային կրթության կազմակերպումը հնարավորություն կնձեռի երիտասարդ սերնդի հոգեբանության մեջ սերմանել էթնոկարողության քաղաքական ուղղվածության նշանակությունը ժողովրդավարական պետություն կառուցելու գործում: Փաստորեն այսօր մանկավարժական հայեցակարգին զուգահեռ պետք է նկատի ունենալ նաև էթնոգենոմշակութային ներուժ հանդիսացող գործոնը, հատկապես, եվրոպական մշակութային գենոտիպին համադրվող հայկական արժեքներով ժողովրդավարական ազգային պետություն կառուցելու հնարավորությունը:

Մի կողմից պետության և կրթության, մյուս կողմից, մանկավարժության և քաղաքականության փոխհարաբերակցության հիմնախնդիրն է ծառանում: Ժամանակին Ա. Գրամշիի առաջ քաշած ուշագրավ թեզը՝ պետությունը՝ որպես «էթնիկական պետության կամ դաստիարակի», ստանձնելու է նոր կրթական քաղաքակրթության գործառույթը, արդիական հնչեղություն է ձեռք բերել: Այս կանխադրույթի արդիական նշականության մասին է շեշտում համաշխարհային գիտության շրջանակներում պետության, ժողովրդավարության և կրթության փոխհարաբերությունների ու կապերի վերլուծության ուղղությամբ իրավիճակին քաջատեղյակ ու այդ ոլորտներում խորագիտակ Կ.Թորեսը:[1] Անդրադառնալով բազմամշակութային աշխարհում էթնիկական ինքնության ապահովման գործոնների հստակեցման հարցին, նա կոնկրետացրել է մասնագիտական

[1] Թորես Կ., Ժողովրդավարություն, կրթություն և բազմամշակութայնության, քաղաքացիական երկընտրանքները գլոբալ աշխարհում, Երևան, Միտի, 2005, էջ 32:

գրականության մեջ այդ հիմնահարցին վերաբերող ուսումնասիրման բացակայությունը, որի առիթով էլ, հիշատակելով Գրամշիի կանխադրույթի կարևորությունը, այնուամենայնիվ, դա չի դարձրել իր հետազոտման օբյեկտը[2]:

Այդ կանխադրույթի փակագծերի բացումն ու ըմբռնումը կասկածից վեր է, որ ունի գիտագործնական նշանակություն. այն հնարավորություն կընձեռի նույն հեղինակի կողմից նշված պետության և կրթության տեսությունների կապերի շուրջ աննշան դիտարկման սահմանը հատել, հատկապես կրթության և էթնոքաղաքականի փոխհարաբերությանը վերաբերող հիմնախնդրի լուծման հայեցակետից:

Արդի փուլում կրթական քաղաքականության բնույթը վերահմաստավորման անհրաժեշտություն ունի, հատկապես մակրո- և միկրոմակարդակների մանկավարժաքաղաքական գործունեության կոորդինացման առումով: Այս հայեցակետից, մեր կարծիքով, առանցքային է բնորոշվում «միկրո- և մակրոմակարդակների փոխմիասնությամբ «էթնոմշակութային միջավայր-կրթություն»՝ որպես ազգային քաղաքական մշակույթի ձևավորման համակարգող գործոնի հիմնախնդիրը:

Ընդհանրացնելով արդի սոցիալ-մարդաբանական գիտությունների բնագավառում մեր կատարած ուսումնասիրությունները, որոնք նպատակաուղղված են եղել, ինչպես Հայաստանում, այնպես էլ համաշխարհային ընդգրկումով կրթության ճգնաժամային իրական պատկերի ու դրանից դուրս գալու հնարավոր գործոնների բացահայտմանը[3], եկել ենք հետևյալ եզրահանգմանը. կրթության էթնոքաղաքական բովանդակության փոխմիասնական երեք բաղադրատարրերը՝ ա) էթնոմշակութային արժեքների բարոքաղաքական իմաստության բացահայտումը ուսուցման գործընթացում, բ) էթնոմանկավարժական (ժողովրդական) մշակույթի ձևերի միջոցով անձի քաղաքական սոցիալականացումը և գ) անձի մեջ էթնոքաղաքական գիտակցության ձևավորումը գործառութային ներուսակությամբ, պայմանավորում են էթնոմշակութային միջավայրի ձևավորումն ու անհատի քաղաքական սոցիալականացումը: Հատկապես ընդգծելի են զարգացնող կրթության սոցիալ-էթնիկական նպատակաուղղվածության իրականացման հարցում չորս գործառույթների դերը, ա) ազգային արժեքանորմատիվ համակարգի բաղադրատարրերի բովանդակությամբ սովորող անձի էթնոքաղաքական սոցիալականացման գործառույթ, բ) կրթության միջոցով ազգայինի և համամարդկայինի համադրման գործառույթ, գ) կրթության որպես ձևավորող էթնոքաղաքական Ես-ի ու հասա-

---

[2] Նույն տեղում, էջ 34, 39:
[3] Խաչատրյան Հ., Կրթության սոցիալ-էթնիկական արժեքայնությունը, Երևան, 2005:

ռակության միջև ներդաշնակ փոխհարաբերության ապահովման գործառույթ;
դ) էթնոհանրույթի ժողովրդավարական համախմբման գործառույթ:

Դժվար չէ նկատել, որ կարևորվում է սոցիոմշակութային փոփոխությունների հարցը: Անժխտելի է այն փաստը, որ էթնիկական գիտակցությունն իր խտացվածությամբ արտահայտվում է էլիտար մշակույթի՝ արվեստի, գիտության, գրականության և ազգային փիլիսոփայության մեջ: Դա այն բնագավառն է, որը միայն ազգի ստեղծագործական ոգին է բնորոշում: Սակայն հիմնախնդիրն առավել էթնոընդհանրական է և դրա լուծումն էլ առնչվում է ազգաբնակչության կրթամշակութային զարգացման գործընթացին: Վերջինս փոխհարաբերակցության մեջ է գտնվում էթնոքաղաքական «Ես»-ի ձևավորման հետ: Այս հայեցակետից պատկերացնելի է, որ էթնիկականը բնորոշվում է ոչ միայն մշակութային պատշաճ մակարդակի բովանդակությամբ, այլ նաև էթնոֆորի գիտակցության այնպիսի դինամիկայով, որի շնորհիվ նա կողմնորոշվում է, թե ինչպիսի հատկանշական գծեր են արծարծված այդ մշակույթի մեջ, որոնք նշանակալից են իր համար ազգային քաղաքական պետության ստեղծման ուղղությամբ:

Էթնոֆորի գիտակցության նման դինամիկան կարող է ապահովել էթնոմշակութային միջավայրն իր փոխմիասնական մակրո- և միկրոմակարդակներով:

Ազգային ինքնագիտակցության սուբյեկտն այդ հայեցակետից, հատկապես հեռանկարի կտրվածքով, կարող է լինել միայն «էթնոգեոտիպ-կրթություն-սոցիալ- մշակութային արժեքներ» փոխմիասնությամբ ազգային դպրոցում էթնոքաղաքական սոցիալականացման գործընթացով անցնող անձը: Էթնոքաղաքական կրթության բովանդակությամբ սոցիալականացվող անհատը՝ էթնոֆորը ազգային քաղաքական մշակույթի տիրույթի ձևավորման սուբյեկտի է վերածվում: Էթնոքաղաքականը, ընդ որում, կապող օղակ է դառնում քաղաքական ընդհանուր մշակույթի (նկատի ունենք մակրոմակարդակին) և անհատի սուբմշակույթի միջև, ինչ խոսք, էթնոսոցիալական համաձայնության գաղափարի սերմանման հիման վրա: Էթնոքաղաքական բովանդակությամբ կրթության կազմակերպումն ազգային քաղաքական դիսկուրսի ձևավորման գերակա գործոնն է: Դա ազգային քաղաքական գիտակցությունը բարեփոխելով, փոխակերպվող հասարակությունում ստեղծում է հանդուրժողականության բարոյաքաղաքական դաշտ ու՝ կարգավորելով կոնֆլիկտները, մեղմում և ուղղորդում է կառուցողական բնույթով:

Սոցիալ-կրթական արժեքային կողմնորոշումը՝ որպես հանդուրժողական քաղաքական մշակույթի ձևավորման երաշխիք, բնութագրական է լինելու քաղաքական համակարգի առանցքը հանդիսացող պետությանը: Հարկ է նշել, որ այսօր էլ հեգելյան այն դրույթն է կենսականորեն արդիական ու կիրառելի, համաձայն որի առանձնացվում է երկու պահ. ա) ազատության գաղափարը, որպես բացարձակ և վերջնական նպատակ և բ) նրա միջոցը՝ գիտելիքների և կամային որակների սուբյեկտիվ տեսանկյունը: Այդ երկու պահերի օբյեկտիվ միասնությունն ապահովողն էլ ազգային պետությունն է:[4]

Այդ նկատառումով է, որ առաջարկվող հայեցակարգում ընդգծելի է ազգային պետությանը՝ որպես ամբողջ հասարակության մակարդակով կրթության սոցիալ-էթնիկական արժեքայնության գաղափարի արմատավորման երաշխավորի, առաքելությունը: Վերջին հաշվով ազգի և պետության մերձեցման գործընթացը ներառելու է էթնիկական նշանակություն, որն արտահայտվելու է հիմնականում կրթության՝ որպես ոչ առևտրային կարգավիճակային արժեքի վերածելով հենց իրեն ազգային բնորոշող պետության կողմից: Ազգային պետության արմատական դիրքորոշումը կրթության՝ որպես սոցիալական ինստիտուտի հեղինակության բարձրացման ուղղությամբ, այն արժեքային կողմնորոշումն է, որի շնորհիվ հնարավոր է սոցիալ-քաղաքական բախումները հարաբերականորեն մեղմել:

Կրթությունն իր սոցիալական գործառույթի ներուժը եթե չի իրականացնում, դա առավել քան ապագործառությունային է: Կրթության առաքելությունը՝ պատրաստել որակյալ մասնագետներ ու էթնոհանրույթի համար արժանի քաղաքացիներ, եթե չի իրականացվում, ապա նախ արժեզրկվում է կրթության սոցիալ-էթնիկական իմաստը և երկրորդ՝ հասարակությունը, ստանալով ոչ համապատասխան կրթության ու դաստիարակության արդյունքում գրեթիկ վարքագծի տեր անհատներ, վերածվում է ժողովրդավարական արժեքներն ու նորմերն արհամարող հասարակության:

Ժամանակակից մեկ ուրիշ հիմնախնդիր է ծառացել մեր էթնոհանրույթի առջև:

Հայոց պետականության կորուստը տարբեր ժամանակահատվածներում գլխավոր պատճառն է մեր ժամանակակից ազգային քաղաքական մենթալիտետի ձևավորման հարցում: Քաղաքական լիդերի նկատմամբ անպատշաճ քաղաքական վարքագիծ դրսևորելը խորհելու տեղիք է տալիս: Նման վարքագիծը նպաստել է ոչ միայն հայաստանյան քաղաքական դաշտի ճապաղացմանը, այլ նաև վերածվել է ազգի քաղաքական համախմբմանը խանգարող

[4] Гегель Г., Работы разных лет, т.2, М., 1971, стр. 163.

գործոնի: Այս հիմնախնդրի լուծման միջոցը կարելի է նկատի ունենալ ազգային դպրոցը: Այսօր մեր ունենք այն, ինչից զրկված ենք եղել ոչ միայն նախախորհրդային, այլ նաև հենց խորհրդային ժամանակահատվածում, երբ քաղաքական լիդերի նկատմամբ պատշաճորեն դիրքորոշման գաղափարը չի վերաբերել մեր ազգային պետության առաջին դեմքին: Դպրոցահասակ տարիներն ուղեցույց կարող են լինել մեր աճող նոր քաղաքական սերնդի համար պետության առաջին դեմքի նկատմամբ պատշաճ հարգանք դրսևորելու ուղղությամբ: Նման գործընթացի սկսումն այսօր մեր ազգային կրթական քաղաքականության շրջանակներում պատմական նախապայման կլինի ապագայում մեր էթնոսի քաղաքական առաքինության ու խոհեմության հաստատման համար:

Մեր ազգային կրթական քաղաքականության կարևոր ուղղվածություններից մեկն էլ եվրոգենոտիպային և հայկական էթնոգենոտիպային արժեքների համադրման իրական լինելու գաղափարի սերմանումն է նոր կյանք մտնող սերնդի հոգեբանության մեջ, որը քաղաքական սոցիալականացման անփոխարինելի գործընթացի սկիզբն է: Այն կոգնիտիվ բնույթի հեղափոխությունն է ապահովում, որն էլ նախորդում է, ըստ պատմամշակութային տեսության գիտակների[5], հումանիստական ուղղությամբ սոցիալ-քաղաքական փոփոխություններին: Դա կնպաստի մեր էթնոհանրույթի կարգավիճակի մասին պատկերացնող քաղաքական էթնոֆորի ձևավորմանը: Փաստորեն, էթնոհանրույթի ժողովրդավարական համախմբման գործընթացն ինքնաբերաբար փոխհարաբերակցության մեջ է գտնվում այդ հանրույթի յուրաքանչյուր անդամի իր էթնոսի կարգավիճակի մասին պատկերացումների հետ, որոնք ձևավորվում են մշակույթի և կրթության միջոցով: Այն արժեքներն ու նորմերը, որոնց իրազեկվում է սովորողը ազգային դպրոցում, նրա համար համաէթնիկական նշանակություն ունեցող ժողովրդավարական համախմբման գաղափարի իրականացման նախադրյալների են վերածվում, հատկապես, իր էթնոիմաստային խորագիտակությամբ կոնֆլիկտների սոցիոմշակութային պատճառների աստիճանաբար կարգավորման գործընթացին մասնակցելու առումով:[6] Հենց դա էլ նախապատրաստում է արտաքին աշխարհում համամարդկայնորեն ընդունելի մեր էթնոբնութագրի ճանաչումը արդիականացված լինելու հայեցակետից:

Արդի փուլում էթնոինքնությամբ և արդիական ունիվերսալին համաներդաշնակվելու հիմնախնդիրն է նաև արծարծվում և՝ ըստ իր նշանակության

---

[5] Александер Дж. Новые теоретические направления в социологии.//Философская и социологическая мысль, Киев, 1992, N2, N4, Нечаев В. Когнитивные революции и институциональные изменения.//Полис, 2002, N5 և այլն.

[6] Խաչատրյան Հ. Սոցիալ-էթնիկական հիմնախնդիրները մանկավարժականի և քաղաքականի փոխհարաբերության մեջ, Երևան, 2007, էջ 7:

ուղղվածությամբ, վերածվում ազգային կրթական ռազմավարության հիմնահարցի:

Խոսքը միջնակարգ հանրակրթական դպրոցի շրջանավարտի նկարագրի մասին է: Շրջանավարտը պետք է գիտակցի հայ ժողովրդի ու հայոց պատմության դերը համաշխարհային քաղաքակրթության մեջ, ունենա ազգային մտածողություն և ինքնագիտակցություն, լինի ազգային ավանդույթների կրողը, պահպանողն ու փոխանցողը, մտահոգվի ազգային և պետական խնդիրների լուծմամբ[7], որը գերարդիական հիմնախնդիր է և, որին զուգահեռորեն կարևորվում է նաև կրթության միջոցով մեր էթնոհանրույթի սոցիոմշակութային պատշաճ մակարդակի ձեռք բերման և համամարդկային հոգևոր ժառանգության ու արդիական քաղաքական մշակույթի փոխազդեցության դաշտի ձևավորման գործընթացը:

Այն, ըստ էության, ունի երկմիասնական նպատակաուղղվածություն. ա) երիտասարդ սերնդի հոգեբանության մեջ էթնոկարողության քաղաքական ուղղվածության գործուն կողմի սերմանում, որը ազգային ինքնագիտակցության ձևավորման գործոններից մեկն է և բ) եվրոպական ու հայկական սոցիալ-մշակութային արժեքների համադրվող բացառիկ երևույթի մասին դասընթացի կազմակերպում ազգային դպրոցում: Այն իր մանրամասներով, վերածվելով կրթական ոլորտում ուսումնասիրման առարկայի, նպաստում է անհատի ոչ միայն էթնոհպարտության զգացումի ձևավորմանն ու համադրական մշակույթի ձեռք բերելուն, այլ նաև հնարավորություն է ընձեռում նրան համամարդկային արժեքների՝ հայկականով զուգորդմամբ ժողովրդավարական դիրքորոշում ու քաղաքական վարքագիծ դրսևորել իր առաջիկա քաղաքական գործունեության մեջ:

Անձի քաղաքական սոցիալականացման կարևոր միջոց են անհարկի «ոչ քաղաքական» համարվող արժեքները՝ էթնոմանկավարժականը և գեղագիտականը: Ժողովրդական մշակույթի՝ էպոսի, ավանդույթների, ասացվածքների, ինչպես նաև գեղարվեստական գրականության մեջ սոցիալական արդարության, հանդուրժողականության և արծարծված այլ գաղափարներն իրենց բովանդակային ուղղվածությամբ հայտնի դառնալով հայ մարդուն կրթության օղակով, կարող են ստեղծել քաղաքական սոցիալականացման էթնոմշակույթին միկրոմիջավայր:[8]

Փաստորեն, ազգային օպտիմալ կրթական քաղաքականության իրականացման գործընթացը երկմիասնական մակարդակներով՝ քաղաքական

---

[7] Հանրակրթության պետական կրթակարգ: Միջնակարգ կրթության պետական չափորոշիչ: Երևան, 2004, էջ 11:

[8] Хачатрян Г. Национальное образование как фактор преодоления социально-политических конфликтов //Проблемы современного образования: Межвузовский сборник научных трудов. Выпуск 6. М.: РУДН, 2007, стр. 47.

և մանկավարժական սուբյեկտների ազգանվեր գործունեությունն է: «Ո՞վ է էթնոքաղաքական միջավայրի ձևավորողը» հիմնահարցն իր միանշանակ պատասխանով ընկնում է մեր էթնոհանրույթի ժողովրդավարական համախմբմանն ուղղված խոհեմորեն կազմակերպվող գործընթացի հիմքում:

Այս մտահղացումները, հնչ խոսք, չեն կարող հավակնել արդի փուլում մեր ազգային կրթության առջև ծառացած բազմաթիվ և բարդ հիմնախնդիրների լուծման գործոնների բացահայտմանը: Տրամաբանական է, որ առաջիկա նորանոր ուսումնասիրությունները և սոցիալ-կրթական գործնական բնույթի պահանջները դեռ ճշգրտումների անհրաժեշտության իրավիճակ կստեղծեն: Չնայած դրան, կարելի է այս շարադրանքի հիման վրա կատարել առաջարկային բնույթի որոշ եզրակացություններ.

ա) ազգային կրթության սոցիալ-էթնիկական ուղղվածությունն ապահովող պարտադիր պայմանն է ազգային կրթական օպտիմալ քաղաքականության՝ որպես փոխհարստացվող, փոխազդվող ու փոխլրացվող մի ունիկալ համակարգի, իրականացումը երկու մակարդակներով, բ) նկատի ունենալով կրթության էթնոքաղաքական նշանակության իրատեսական լինելը, էթնոքաղաքական բովանդակությամբ կրթության կազմակերպման ազգային-պետական հեռանկարային ծրագրի մշակման և գործողության մեջ դնելը հրատապ արդիական խնդիր է դարձել: Նշված ծրագրի իրականացումը կապված է ազգային դպրոցի բոլոր օղակների համար պատշաճ մակարդակի մասնագետներ պատրաստելու հետ: Փաստորեն այսօրվա ԲՈՒՀ-ը պատրաստելու է էթնոքաղաքական դիդակտիկայի մասնագիտության գծով կադրեր, գ) ազգային դպրոցն արդի փուլում իր առաջնահերթ խնդիրների համակարգում առանցքային նշանակություն է տալու էթնոքաղաքական մշակույթի ձևավորմանը և, հատկապես, ազգային պետության առաջին դեմքի լիդերի նկատմամբ անձի մեջ քաղաքական պատշաճ վարքագիծ սերմանելուն, դ) եվրոպական չափանիշներով արդի հայկական պետության բարոյաքաղաքական վերափոխման նպատակով կարևորվում է եվրոպական ու հայկական սոցիալ-մշակութային արժեքների համադրման գաղափարի սերմանումը երիտասարդ սերնդի հոգեբանության մեջ: Այդ առումով անփոխարինելի գործընթացային նշանակություն կունենա ազգային դպրոցի ծրագրերի համակարգում եվրոպական ու հայկական գենոտիպերի զուգահեռը անցկացնող դասընթացի ներառումը:

Եվ վերջապես ե)՝ քաղաքականապես արդիականացվող նոր սերնդի գիտակցության այլընտրանքինն է. արդի գլոբալացման պայմաններում էթնոինքնության պահպանման գլխավոր երաշխիքը ազգային կրթության միջոցով «էթնոհանրույթի ժողովրդավարական համախմբումը» (Գ.Օ'Դոնելի և Ֆ.Շմիտերի տերմինաբանությամբ) կամ մեր կողմից բնորոշվող տերմինով՝ «հայ քաղաքական էթնոֆորի» ձևավորումն է: